<Յունիբանկ> ԲԲԸ 2022թ. գործունեության վերաբերյալ Վարչության

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի բաժնետերեր, գործընկերներ, տիկնայք և պարոնայք,

Ողջունում եմ Ձեզ «Յունիբանկ» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովում՝ 2022 թվականի աշխատանքի արդյունքներով: Թույլ տվեք ներկայացնել Բանկի նախորդ տարվա գործունեության արդյունքների համառոտ հաշվետվությունը:

Կանգնելով համաշխարհային տնտեսության տուրբուլենտությունից բխող նոր մարտահրավերների և ռիսկերի առջև՝ Բանկը օպերատիվորեն վերանայեց իր մոտեցումները կիրառվող գործիքակազմի մասով. զգալիորեն խստացրեց ռիսկերի գնահատման պահանջները, ներդրեց ներդրումային այլընտրանքային մեխանիզմներ, հարմարեցրեց գործիքները շուկայական փոփոխություններին:
Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել վարկային պորտֆելի որակի բարելավմանը, խնդրահարույց վարկերի հետբերմանը, բանկային ռիսկերի կառավարման համակարգի կատարելագործմանը, հաճախորդների հոսքի կտրուկ աճի պայմաններում հաճախորդների որակյալ սպասարկման ապահովմանը:

<u>Հիմնական իրադարձությունները</u>

- ✓ Արձագանքելով նորագույն տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում մեր հաճախորդների կարիքներին՝ Յունիբանկը ներդրել է Apple Pay և Google Pay անհպում վճարումների ծառայությունը՝ որպես գնումների համար վճարելու պարզ և կոնֆիդենցիալ միջոց:

- ✓ Համաշխարհային անկայունության պայմաններում Բանկը մշտապես աշխատել է թղթակցային հարաբերությունների աշխարհագրությունն ընդլայնելու ուղղությամբ՝ հաստատելով վստահելի գործընկերակցություն Միջին Ասիայի, Չինաստանի, Լատվիայի բանկերի հետ՝ ապահովելու հաճախորդների արտաքին տնտեսական և անդրսահմանային վճարումների օպերատիվ իրականացումը: Նախորդ տարվա ընթացքում Բանկում SWIFT փոխանցումների թիվն աճել է 35%-ով:

- ✓ Մասնաճյուղային ցանցի օպտիմալացման քաղաքականության շրջանակներում Բանկը դադարեցրել է «Ազատություն» և «Արարատ» մասնաճյուղերի գործունեությունը՝ ակտիվները և պարտավորությունները փոխանցելով համապատասխանաբար «Հաղթանակ» և «Արտաշատ» մասնաճյուղերին,

բարեկարգել է «Թիվ 47» և «Աշտարակ» գործող մասնաճյուղերի տարածքները, բացել է «Հայրենիք» և «Տաշիր» մասնաճյուղերը: Զուգահեռաբար աշխատանքներ են տարվել բջջային հավելվածի թարմացման ուղղությամբ, UniMobile-ի օգտատերերի թիվը 2021 թվականի համեմատ աճել է 65%-ով, իսկ ակտիվ օգտատերերն ավելացել են 155%-ով:

- ✓ 2022 թվականը հաջող տարի էր պրեմիում բիզնեսի համար: Ծառայությունների և գործիքների հատուկ փաթեթները, շուրջօրյա աջակցությունը, սպասարկման բարձր որակը և յուրաքանչյուր հաճախորդի նկատմամբ ուշադրությունը թույլ են տալիս Բանկին լինել վստահելի գործընկեր, որին կարող է վստահվել ֆինանսական խնդիրների լուծումը: Յունիբանկի Private Banking-ը՝ Unibank Privé-ն, ճանաչվել է լավագույնը Հայաստանում Euromoney Global Private Banking Awards 2023-ի արդյունքներով:

- ✓ Համաձայն AMX Awards ֆոնդային բորսայի մասնակիցների ամենամյա մրցույթի արդյունքների՝ Յունիբանկը ճանաչվել է «Բաժնետոմսերի լավագույն տեղաբաշխող՝ Բորսայի կորպորատիվ արժեթղթերի տեղաբաշխման համակարգով»:

- ✓ Ֆինտեխ արդյունաբերության ինտենսիվ զարգացման պայմաններում Յունիբանկի աջակցությամբ Երևանում անցկացվեց FINTECH360 միջազգային համաժողովը: Միջոցառումը մեկ հարթակում համախմբեց փորձագետների և գործարար համայնքի ներկայացուցիչներին՝ թույլ տալով նրանց թարմացնել նորարարական ֆինանսական տեխնոլոգիաների մասին իրենց գիտելիքները, փոխանակել փորձը և ձեռք բերել օգտակար շփումներ բիզնես միջավայրում:

- ✓ Շարունակելով ներդրումները առաջադեմ տեղեկատվական տեխնոլոգիաներում՝ Յունիբանկը հաջողությամբ անցավ PCI DSS ստանդարտի պահանջներին համապատասխանության տարեկան հավաստագրման աուդիտ և ISO 27001:2013 ստանդարտին համապատասխանության վերատեստավորում՝ հերթական անգամ հաստատելով իր հաճախորդների անձնական տվյալների պաշտպանության բարձր մակարդակը:

- ✓ Լիովին աջակցելով շրջակա միջավայրի պահպանության և շրջակա միջավայրի նկատմամբ հոգատարության աճող միտումին՝ Յունիբանկը սկսեց իր զարգացման ռազմավարության մեջ ինտեգրել բնապահպանական, սոցիալական և կառավարչական պատասխանատվության սկզբունքները: ESG Sustainalytics ոլորտում առաջատար վերլուծական ընկերության փորձագետները հաստատել են Յունիբանկի «կանաչ» պարտատոմսերի թողարկման հայեցակարգի համապատասխանությունը միջազգային չափանիշներին: Ներգրավված ներդրումները կուղղվեն Հայաստանում էներգաարդյունավետության, գյուղատնտեսության մեջ բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, ջրային ռեսուրսների մաքրման և թափոնների կառավարման ոլորտներում նախագծերի ֆինանսավորմանը:

- ✓ Սոցիալական պատասխանատվության իր առաքելության շրջանակներում Յունիբանկն ավանդաբար հանդես է գալիս որպես «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» և «Դիլիջանյան խաղեր» փառատոնի հովանավոր և դարձել է «Համահայկական ինտելեկտուալ շարժման» մշտական գործընկեր, որի հիմնական նպատակն է խթանել ինտելեկտուալ ժամանցի գաղափարը:

- ✓ Moody's Investors Service միջազգային վարկանիշային գործակալությունը հաստատել է Յունիբանկի վարկային վարկանիշը B2 մակարդակում՝ կայուն կանխատեսմամբ:

<u>Համառոտ ֆինանսական ցուցանիշների մասին</u>

Համաձայն Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների, Բանկն ամփոփել է 2022 թվականը հետևյալ ցուցանիշներով՝

- **ԱԿՏԻՎՆԵՐԸ** կազմել են 320,1 մլրդ դրամ՝ տարվա կտրվածքով աճելով 27%-ով, Հայաստանի բանկային համակարգի ակտիվների աճը կազմել է 20%:
- **ՎԱՐԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԸ** կազմել են 119,8 մլրդ դրամ կամ ընդհանուր ակտիվների 37%-ը:
- **ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ** աճել են 29%-ով՝ կազմելով 285,9 մլրդ դրամ: Համակարգի պարտավորությունների տարեկան աճը կազմել է 17%:
- **ԱՎԱՆԴՆԵՐԻ** պորտֆելը կազմել է 252,8 մլրդ ՀՀ դրամ: Ավանդային բազայի աճը պայմանավորված է ֆիզիկական անձանց ցպահանջ հաշիվներին դրամական միջոցների ակտիվ ներհոսքով: Թողարկված պարտատոմսերի պորտֆելը կազմել է 9,1 մլրդ դրամ:
- **ԶՈՒՏ ՏՈԿՈՍԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** գերազանցել են 9,9 մլրդ ՀՀ դրամը, զուտ տոկոսային մարժան կազմել է տարեկան 3,2%:
- **ԶՈՒՏ ԿՈՄԻՍԻՈՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ** կազմել են 9,2 մլրդ դրամ՝ աճելով ավելի քան 3 անգամ:
- **ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՇԱՀՈՒՅԹԸ** կազմել է 34,5 մլրդ ՀՀ դրամ՝ գրեթե կրկնակի գերազանցելով 2021թ. ցուցանիշը:
- **ԸՆԴՀԱՆՈՒՐ ԿԱՊԻՏԱԼԸ** կազմել է 34,1 մլրդ ՀՀ դրամ: Տարեվերջին կապիտալի համարժեքության գործակիցը կազմել է 15,97%, ինչը գերազանցում է ՀՀ կենտրոնական բանկի սահմանած նվազագույն մակարդակը (12%):
- **ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԸ** կազմել է գրեթե 4,4 մլրդ դրամ: Չնայած զգալի չափով ստեղծված պահուստներին, Յունիբանկը դուրս եկավ դրական դինամիկայի և տարին ավարտեց դրական ֆինանսական արդյունքով: Պահուստին զուտ հատկացումների գումարը կազմել է 17,2 մլրդ դրամ, մինչդեռ ֆինանսական արդյունքը մինչև պահուստները և եկամտային հարկը կազմել է 22,9 մլրդ դրամ: Փաստացի հետբերումը 2022թ. կազմել է շուրջ 4,8 մլրդ դրամ: 2022 թվականի ընթացքում բռնագանձվել և Բանկին ի սեփականություն է գրանցվել 28 միավոր անշարժ գույք՝ մոտ 1,3 մլրդ դրամ ընդհանուր հաշվեկշռային գումարի, վաճառվել է 59 միավոր անշարժ գույք՝ մոտ 3,2 մլրդ դրամ ընդհանուր գումարի:

Կորպորատիվ բիզնես

Փոքր և միջին բիզնեսին աջակցելը 2022 թվականին շարունակել է մնալ մեր առաջնահերթություններից մեկը: Կորպորատիվ բիզնեսի հիմնական խնդիրն էր կենտրոնանալ բիզնեսի առավել ցածր ռիսկային հատվածների վարկավորման վրա, մեծացնելով վարկային պորտֆելի ծավալը և շուկայում Բանկի մասնաբաժինը, շեշտը դնելով բարեխիղճ վարկառուների հետ հարաբերությունների զարգացման և նրանց համապարփակ սպասարկման կազմակերպման վրա:
Նիշային ուղղություններն էին փոքր արդյունաբերությունը, առևտուրը, գյուղատնտեսությունը, շինարարությունը և ծառայությունների մատուցման ոլորտը:

Էկոնոմիկայի նախարարության հետ կնքվել է «Տնտեսության արդիականացում» ծրագրի շրջանակներում համագործակցության պայմանագիր, որի իրականացման համար մշակվել է հավանական հաճախորդներին փոխառությունների և ֆինանսական լիզինգի տրամադրման գործիք: Բիզնես գործընթացի արդյունավետությունը բարձրացնելու նպատակով միկրովարկերի սքորինգային համակարգում ներդրվել է արհեստական բանականության տեխնոլոգիա:

2022 թվականի վերջի դրությամբ կորպորատիվ վարկերի ծավալը Բանկի ընդհանուր վարկային պորտֆելում կազմել է 36,6 մլրդ դրամ, պորտֆելը դիվերսիֆիկացված է Բանկի վարկավորման քաղաքականությամբ նշված նիշային հատվածներով:

Իրավաբանական անձանց ժամկետային ավանդների պորտֆելը կազմել է 11,4 մլրդ դրամ, ընթացիկ հաշիվների միջոցների ծավալը՝ 51,2 մլրդ դրամ:

Մանրածախ բիզնես

Մանրածախ բիզնեսի զարգացումը Բանկի համար շարունակել է առաջնահերթություն մնալ նաև 2022 թվականին:
Սպառողական պահանջարկի վերականգնումը հանգեցրեց վարկավորման աճին, ինչի արդյունքում ընդհանուր մանրածախ պորտֆելը աճել է ավելի քան 4,8 մլրդ դրամով կամ 6%-ով՝ հասնելով 83,2 մլրդ դրամի: Հաշվետու տարվա ընթացքում նկատվել է վարկառուների կարգապահության բարելավում, ժամկետանցների տեսակարար կշիռը նվազել է մինչև 1,9%:

Անշարժ գույքի գրավադրմամբ սպառողական վարկերի գծով գրանցվել է տրամադրումների ծավալի նկատելի աճ: Երկրում բնակարանաշինության զարգացման հետ մեկտեղ հիփոթեքը դարձավ մանրածախ վարկավորման զարգացման նիշային գործիք, այդ վարկերի պորտֆելը հասավ 12 մլրդ դրամի, ընդ որում ժամկետանցության առումով այս պորտֆելը գրանցել է ամենացածր ցուցանիշը՝ 0,1%: 2022 թվականի նոյեմբերին Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ ստորագրվել է համագործակցության պայմանագիր Արցախի առանձին շրջաններից տեղահանված ընտանիքների համար բնակարանային մատչելիության ապահովման պետական ծրագրի

իրականացման մասին, և Յունիբանկն իր ակտիվ մասնակցությամբ միայն դեկտեմբերին բավարարել է ավելի քան 20 նպաստառու ընտանիքներ հայտեր:

Գործընկերների ցանցի ընդլայնումը և նորարարական ավտոմատացված համակարգը Յունիբանկին թույլ տվեցին պահպանել առաջատար դիրքերը POS վարկերի քանակով և ծավալով: Արհեստական բանականության տեխնոլոգիայի օգնությամբ 2022 թվականին մշակվել է ավելի քան 400,000 վարկային հայտ:

Մանրածախ հաճախորդների դրամական միջոցներն աճել են 60%-ով և կազմել են 190,2 մլրդ դրամ, ընդ որում ժամկետային ավանդների պորտֆելը մնացել է գրեթե անփոփոխ՝ կազմելով 103,8 մլրդ դրամ, իսկ ցպահանջ միջոցների ծավալը կազմել է 86,4 մլրդ դրամ՝ 2021 թվականի 13,7 մլրդ դրամի դիմաց:

<u>Կորպորատիվ կառավարում</u>

Բանկը շարունակել է կատարելագործել իր կորպորատիվ կառավարման համակարգը. Խորհրդին և Վարչությանը կից հանձնաժողովների կազմը պարբերաբար թարմացվել է, ներգրավվել է Խորհրդի անկախ անդամ Ֆիլիպ Դելմոտը, ով ունենալով ներդրումային բանկերի ֆինանսական գործիքների կառավարման երկարամյա փորձ, համակարգում է Բանկի քաղաքականությունը ֆոնդային շուկայի գործիքներում ներդրումներ կատարելու ոլորտում:

Բանկի գործունեությունն ապահովելու գործում կառավարման մարմիններին աջակցում են հետևյալ հանձնաժողովները՝ **Խորհրդին կից**. Աուդիտի և ռիսկերի կառավարման հանձնաժողով, Ներդրումային հանձնաժողով, Անձնակազմի և պարգևատրումների հանձնաժողով, **Վարչությանը կից**. Ակտիվների և պասիվների կառավարման հանձնաժողով, Սակագնային հանձնաժողով, Անձնակազմի գնահատման հանձնաժողով, Տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական անվտանգության հանձնաժողով, Գույքագրման, գնումների և օտարման հանձնաժողով:
Ակտիվորեն գործում են նաև Պահուստների կառավարման հանձնաժողովը, Վարկային կոմիտեն, Մրցութային հանձնաժողովը, Վարկային սքորինգի հանձնաժողովը:

<u>Կադրային քաղաքականություն</u>

Բանկային ոլորտում աշխատողների պատմականորեն բարձր հոսունության և արդիական մասնագիտություններով աշխատանքային ռեսուրսների սակավության պայմաններում Բանկին հաջողվեց հաղթահարել կադրային ճգնաժամը և ապահովել Բանկի անխափան գործունեությունը:
Յունիբանկի ֆինանսական աջակցությամբ Պոլիտեխնիկական համալսարանում բացվել է թվային բանկային լաբորատորիա, որը հնարավորություն է տալիս ուսանողներին ծանոթանալ բանկային ոլորտի գործնական գիտելիքներին, անցնել պրակտիկա, ծանոթանալ հաջողակ գործարարների անձնական փորձին: Թեստերի և հարցազրույցների արդյունքներով լավագույն ուսանողները աշխատանքի են ընդունվում:

Աշխատանքներ են սկսվել կազմակերպչական օպտիմալ կառուցվածք ձևավորելու, Բանկի կադրային քաղաքականության դերը բարձրացնելու ուղղությամբ՝ ներդնելով աշխատակիցների մասնագիտական կարողությունների զարգացման և կարիերայի առաջխաղացման մոտիվացիոն թափանցիկ սխեմա:

2022 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ աշխատողների թիվը կազմել է 831 աշխատող:

<u>Համապատասխանություն ՀՀ կենտրոնական բանկի պահանջներին</u>

Բանկում գործում է Համապատասխանության տնօրինություն, որի հիմնական նպատակն է աջակցել ղեկավարությանը ապահովելու Բանկի գործունեության համապատասխանությունը սահմանված կանոններին, ներքին քաղաքականությանը և ընթացակարգերին, օրենսդրական նորմերին: Այդ նպատակով իրականացվել է ներքին կանոնակարգերի, Բանկի ծառայությունների և գործիքների համապարփակ վերլուծություն, օրենսդրության փոփոխությունների նախագծերի ուսումնասիրություն և Բանկի աշխատակիցների համար խորհրդակցությունների անցկացում:

Համապատասխանության տնօրինության աշխատակիցները պարբերաբար այցելում են մասնաճյուղեր, որտեղ ծանոթանում են աշխատանքի կազմակերպմանը և ստուգում աշխատակիցների գործունեության համապատասխանությունը Բանկի ներքին կանոնակարգի պահանջներին, անցկացվում են սեմինարներ բանկային օրենսդրության փոփոխությունների, հաճախորդների սպասարկման որակի բարձրացման վերաբերյալ:

Համապատասխանության տնօրինությունը նաև վերլուծում է հաճախորդների բողոքներն ու առաջարկները՝ սպասարկման որակը բարելավելու և նմանատիպ բողոքները կանխելու նպատակով: Համապատասխանության տնօրինության և մասնաճյուղերի միջև օպերատիվ փոխգործակցության շնորհիվ 2022 թվականին հաճախորդների բողոքների թիվը 2021 թվականի համեմատ նվազել է 27%-ով, և դա այն պարագայում, որ հաճախորդների բազան զգալիորեն աճել է:

Համապատասխանության տնօրինության ուշադրության կենտրոնում է փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ոլորտում վերահսկողության խստացումը, ինչպես նաև Բանկի գործունեության և հաշվետվությունների FATCA-ի պահանջներին համապատասխանության ապահովումը:

<u>2023 թվականի ռազմավարական առաջնահերթությունները</u>

Միջնաժամկետ հեռանկարում իրականացման համար Բանկի հիմնական ռազմավարական նախաձեռնությունների շրջանակն ընդգրկում է հետևյալ ոլորտները և կարող է ընդլայնվել ու համալրվել փոփոխվող իրողություններով թելադրված նոր խնդիրներով.

- ✓ բաժնետերերի կառուցվածքի ընդլայնում, 4,5 մլրդ դրամ ծավալով սովորական բաժնետոմսերի լրացուցիչ թողարկման միջոցով կապիտալի ներգրավում,

- ✓ փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի համակարգերի ուժեղացում՝ ինչպես գործընթացների ավտոմատացման, գործառնական մոդելի փոփոխման, այնպես էլ կադրերի պոտենցիալի բարձրացման միջոցով,

- ✓ մանրածախ վարկավորման շուկայում Բանկի մասնաբաժնի ավելացում, մասնավորապես հիփոթեքային վարկավորման ծավալների ավելացում,

- ✓ ֆինանսական տեխնոլոգիաների զարգացում (արհեստական բանականության ամբողջական ներդրում անգրավ մանրածախ վարկերի համար, միկրո բիզնեսի համար անգրավ վարկերի մեքենայական ուսուցման վրա հիմնված սքորինգային համակարգի ներդրում, մարքեթփլեյսի հարթակի և էլեկտրոնային առևտրի գործարկում, հեռահար բանկային սպասարկման համակարգերի զարգացում, հիմնական բիզնես գործընթացների օպտիմիզացում):

Եզրափակելով՝ ցանկանում եմ շնորհակալություն հայտնել այս միջոցառման բոլոր մասնակիցներին և Բանկի Վարչության անունից շնորհակալություն հայտնել մեր բաժնետերերին՝ Յունիբանկի ռազմավարությանը հավատալու համար, հաճախորդներին և գործընկերներին՝ արդյունավետ համագործակցության համար, Յունիբանկի թիմին՝ պրոֆեսիոնալիզմի և արդյունավետ աշխատանքի համար: Համոզված եմ, որ միասնական ջանքերով Յունիբանկը նպատակաուղղված կլինի նորարարական զարգացմանը և նոր բարձունքների նվաճմանը:

Մեսրոպ Հակոբյան
Վարչության նախագահ
05.05.2023թ